տարի ս. Նշանը մնաց գերութեան մէջ: Իսկ Վանայ հասարակութիւնը այդ չորս տարոայ ընթացքում սուգ էր կատարում: Քանիցս անգամ պատգամաւորներ ուղարկոեցան եւ մեծ փրկանքներ առաջարկոեցան, մինչեւ, վերջապէս, կարողացան գերութիւնից ազատել իրանց աշխարհի սրբութիւնը:

Մենք այժմ բարձրանում էինք Վարագայ լեռան զառիվերը: Մինչեւ մի որոշ գիծ՝ այդ սարը կանաչազարդ էր. տեղ-տեղ երեւում են թուփեր ու պուրակներ, տեղ-տեղ պատած է խոտաւէտ մարգերով, շատ տեղերում եւս լեռան կողքերը ծածկոած են հասունացած գարիի կամ ցորեանի ոսկեգոյն արտերով: Հնձողը գործում է, մանգաղը փայլում է, եւ աշխատասէր մշակի թախծալի երգը հնչեցնում է հսկայ լեռան սրբազան վայրերը:

Արեւը սկսել է այրել, չնայելով, որ դեռ առաւօտ է: Հովիւը իր թաղիքեայ վերարկուն (քափանակ) ձգելով ցուպի գլխին, նրան ամպահովանիի ձեւ է տոել եւ արեւի կիզող ճառագայթներից պատսպարոելու համար նստել է նրա ստորի ներքոյ: Նրա շուրջը, սփռոած խոտաւէտ արօտամարգերի մէջ, արածում են ոչխարները, մի ժայռից դէպի միւսը թռչկոտում են այծերը, իսկ աչալուրջ շները հեռոից հսկում են այդ միամիտ անասունների անհոգ զոարճութիւնների վրայ, որ կարող է մի ակնթարթում սուգի փոխոել...

Կանաչազարդ գծից դէպի վեր, մինչեւ գագաթը, Վարագայ լեռը մերկ է եւ բաղկացած է անմատչելի, թխագոյն-կարմիր ժայռերից: Այդ բարձրութիւնների վրայ խիստ հազիւ անգամ դիպել է մարդու ոտքը: Երբեմն սրաթռիչ կաքաւները միայն խմբովին թռչում են մի ապառաժից դէպի միւսը, կամ սեւափետուր արծիւը, որպէս մի սգաւոր եւ սեւազգեստ ոգի, միայնակ նստած Գալիլիայի ժայռերից մէկի վրայ, վերեւից տխրութեամբ նայում է դէպի ցած, դէպի Արծրունիների աւերակ պալատների բեկորները, այն Արծրունիների, որոնք այնքան շատ դարեր խնամել ու փայփայել էին նրան...

Վարագայ լեռը Վանայ հովտի շտեմարանն է. այստեղից են վազում ջրերի այն բազմաթիւ վտակները, որոնք ոռոգում են Այգեստանի ընդարձակ այգիները եւ ջուր են մատակարարում շատ գիւղերի, որոնք սփռոած են լեռան ստորոտներում:

Վանքին դեռ ոչ բոլորովին մօտեցած, ճանապարհի մի կողմում տեսանք մի խումբ մարդիկ: Այստեղ, որպէս երեւում էր, երկրագործական մի նոր փորձ էին անում, վարում էին մի գութան, որը թէ՛ իր ձեւով եւ թէ՛ տեսակով ամենեւին նման չէր տեղական ծանր, անշարժ գութաններին: Գութանի մաճը բռնած՝ կառավարում էր մի բարձրահասակ անձնաւորութիւն, որի հագուստից երեւում էր, որ աշխարհական չէ: Նա ցոյց էր տալիս վանքի անփորձ մաճկալներին նորաձեւ գութանի բանեցնելու եղանակը: Միւսները հե-